տանի գրեանց, 'ի զբօսանս 'ի պարտիզի և յունկնդրութիւն խրատու վերատեսչին կամ տեսչին, այլ և 'ի հրահանգս բեմբասացութեան 'ի մեծահանդէս տօնս։

41. Մեծաւ խնամով խրատին ուսանողքն գնալ ընդ երիցագոյնս իւրեանց խոնարհութեամբ, ընդ հաւատարս եղբայրսիրութեամբ և ընդ ստորնագոյնս քաղցրութեամբ, և ընդ ամենեսին քաղաքավարութեամբ։

42. Գլխաւորն 'ի պատիժս յանցաւորաց և կանոնազանցից՝ է յանդիմանութիւն վերատեսչին առանձինն կամ հրապարակաւ և ապաշխարանք ինչ ըստ յանցանացն թեթեւութեան կամ ծանրութեան. իսկ վերջին և սաստկագոյն պատիժ արտաքսումն 'ի Դպրոցէն առանց վկայագրոյ։ Դանք և հալուածք խափանեալ են բոլորովին։

43. Ո՛չ ումեք ուսանողաց հրաման է նընջելոյ 'ի ցերեկի, զի հեռի լինիցին 'ի դատարկութենէ և 'ի թուլութենէ, այլ շատանան գիշերային քնովք։

44. Գինի և օղի չըմպեն երբէք ուսանողքն, բայց եթէ ումանք առ տկարութեան խորհրդով բժշկի առ ժամանակ մի, իսկ զծուխ ձգել արգելեալ է խստիւ ամենեցուն։

ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ եւ հաւաքմունք աստուածաշունչ բանից Թարգման յաւրինեալ ի խորհուրդ Թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ծեռնադրեցաւ Թագաւորն Հայոց Մեծն Լեւոն

(Շարունակութիւն)

Իսկ եթէ ժողովրդի հրէայն 'ի մարդս ումանս լուծանել զդրեալս, ցուցցէ թէ՝ ո՛վ ոք 'ի մարդկանէ բաւական եղև ամենեւին զամենայն Հոգին ընդունել. զի թէպէտ և կատարեցին գործս ինչ առաւել քան զայլ մարդիկ, որպէս Դաւիթ, Եզեկիա, որպէս ապրեցոյց աղաւթիւք զքաղաքն Երուսաղէմ. և Օ.աւրաբարէլ. սակայն փոքր ինչ՝ և մի ինն իրս, և Աստուծոյ աւգնականութեամբ և զաւրութեամբ։ Եւ այն՝ որ զստացանէ կարծէ զստացեալսս, զԲրիստոսէ ընդէ՞ր ոչ յանձն առնուցու զնախաձեռնութիւնս, որ թէ զի՞նչ զաւրութիւնս կատարեաց, սոյն իսկ մարգարէ յայտ առնէ թէ՝ "Իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց"։ Եւ ո՛չ այս միայն, այլ և յաջորդք առաջի եղեալ ընթերցաւածոյս, ցուցանէ զաստուցելոցս զաւրութիւն և յանդիմանէ զանամաւթան։ Այն թէ ոչ 'ի կարծ դատեսցի և ո՛չ ըստ խաւսից յանդիմանեսցէ. ահաւասիկ Աստուածութեան է նշանակ։

Յաղագս հրաշափառ խորհրդոյ բարեբանեալ աւուրս լուսոյ և նորոգութեան Աստուածային յայտնութեանս, յորմէ են

աստուածապանիչն բանք, և սրբազանիչ հարցն 'ի նոսին աշխատասիրաբար տեսութիւնք. ուստի և մեզ յատենաբանական սպասաւորութիւն հասեալ, բաղում էին բանք և դժուարապատումք։ Այլ այժմ այսոքիկ բաւականք լեցին, զևս յաճախագոյնն այլոյ թողլով տեղւոյ և ժամանակի, մանաւանդ բարձրագունիչն յիմաստս քան զմեզ։ Եւ մեք խաւսեսցուք յաղագս այլ իմն խորհրդածութեան, յոր ժամանեալ բարեպաշտաբար միահամուռ ժողովեցաք, որ է այս, զի յաւուրս յայտնութեան անմահ և երկնաւոր Թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի եհաս մերս սրբազանի այս ժողովոյ՝ և Աստուածային լրութեան սրբոյ Եկեղեցւոյ զառ 'ի քաջ և բարեպաշտ արմատոց բխեալ գաւազանն և զբոյս բարեպաշտութեան, զպսակաւորս Լեռն եղաղլխել և ընծայել 'ի Թագաւորութիւն՝ տանս Թորգոմայ ազգիս Հայասանեայց, որով յայս ժամանեալ մեր, բնչ փոքր ինչ յաղագս Թագաւորութեան խաւսեսցուք յԱստուածաշունչ գրոց։ Նախ առաջին քննելով, թէ՝ զի՞նչ է Թագաւորութիւն, և. ապա թէ՝ ո՞վ է առաջին Թագաւոր. և երրորդ թէ՝ յորմէ՞ հետէ, և կամ զի՞արդ սկսաւ Թագաւորութիւն 'ի Նարդիկ. և չորրորդ թէ՝ զի՞նչ են կարգ և իրաւունք Թագաւորի։

ՍԱՀՄԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ։ Թագաւորութիւն է ըստ ուղիղ բանին՝ 'ի վերայ աշխարհի՝ որ իւր է վիճակեալ, և 'ի նմա բնակելոցն իշխել, արդարացի հարկս և իրաւունս 'ի նոցանէ առնուլ, և զնոսին 'ի հաստատութիւն պահել. արտաքին թշնամեացն՝ քաջութեամբ պատերազմեալ՝ յաղթել, և կամ հաշտութեան հնարիւք զեռաղաղութիւն ողջունել. և զամենայն ինքեան հնազանդեալսն առանց իրիք պատճառի յաւրէնս և յիրաւունս անլուծանելի ունել. բարեգործացն գովութիւնս և պատիւս շնորհել, և չարեացն և ոչք արտաքոյ աւրինացն արշաւիցեն, տանջանս և պատիժս հատուցանել. ոչ երևիլ 'ի փառաւքն բարձրամտիլ, այլ սպասաւոր Աստուծոյ Թագաւորութեանն զենքն կարծել, ըստ Սողոմոնի թէ՝ "Լուարուք Թագաւորք, զի սպասաւոր էք Աստուծոյ Թագաւորութեանն"։ Եւ զլեռաւորելով ասասցուք. Թագաւորութիւն է՝ որոյ իշխէ զբազումն և զբաժանեալսն՝ ըստ անձանց և ըստ արուեստից, նաև ըստ բարուց, և թէ դէպ լեցի՝ ըստ կրաւնից բարեպաշտութեամբ, իմաստութեամբ, 'ի խաղաղութիւն և 'ի բարեկարգութիւն նուաճել։ Եւ այս է սահման Թագաւորի։ Յետ այսորիկ խնդրելի է, թէ ո՞վ է առաջին Թագաւոր։

(Շարունակելի։)

ԱՂԵՐՍ ԱՌ ՏԷՐ

Ամենակարող Տէր իմ եւ Աստուած,
Հայեաց յիս, որ եմ ձեռին քո հաստատուած
Տարրանիւթ զոյիս զու պսակ փառաց,
Յուսով ակնկալ հանդերձեալ կենաց.
Առ քեզ ապաստան մնամ միշտ կանխեալ,
Եւ զքոյդ քղանցից ցանգ բուռն հարեալ
Տէր իմ յիս գթա՛ եւ ինձ ողորմեա։՝)

Բան Հօր ծածկագէտ, ծածուկ յիս ազդեա՛,
Զի ես մտադիւր փոյթ յանձին կալայ,
Զիմ լոմայանուէր զընծայս ի սեղան
Հանել կամակար վեհիդ սրբութեան.
Բարեյոյս զտեալ զքանքարս ի սրտի
Դրոշմել մատամբդ յայս թերթ քարտենի։

---

*) Այս տողը պէտք է կրկնել իւրաքանչիւր տան վերջումը։